ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ 94 «21» օգոստոսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն
Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2020թվականի օգոստոսի 17-ի թիվ 5 նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ:

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՄԱՐԶ 04600389

Մուտք թիվ N-16608-202
21 08 2020 թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հրազդանի համայնքի
Ավագանու 2020թվականի հոկտեմբերի 17-ի
թիվ 5 նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

14. ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ ՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

15-Ն. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

17.08.2020թ N 14

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 17-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ

	/կողմ/	/ դեմ/	/ձեռնպահ/
1. Մ. Օհանյան			
2. Վ. Վարդանյան			
3. Խ.Աբրահամյան			

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

17.08.2020թ
Համայնք Արևադաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

17.08. 2020թ. N 15-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով

ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի<< Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 30-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ հավելված N1 և /1,2,3,6 հատվածներում/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

1. Ս. Օհանյան
2. Կ. Վարդանյան
3. Խ. Աբասյան

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

17.08.2020թ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
N15-ՈՐՈՇՄԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N166- Ն որոշմամբ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքին պետական բյուջեից հատկացվել է /աբ դրամաշնորհներ համայնքներին / 481300 դրամը
2)2020 թվականի բյուջեի եկամտային մասը ավելացնել 481300 դրամ ուղղել ապարատի 01-1-1 4111 հոդվածին /աշխատավարձ/
3)Բյուջեով նախատեսված 01-1-1 հոդված 4239/ ընդհանուր բնույթի ծառայություններ 100.000 դրամ տեղափոխել 01-1-1 4269/ հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին
4) բյուջեի 01-6-1 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածի գումարը 220500 դրամ տեղափոխել 01-1-1 5121 /տրանսպորտային սարքավորումներ/ հոդվածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/17894-20

«11» 08 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՀՈՎՍԵՓ ՕՀԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օհանյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 78 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

8/11/2020

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Մարտիրոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-127

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՐՊԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Ներկայացված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու որոշման նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 30-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

Այս առումով նախևառաջ անդրադառնալով Նախագծի հիմնավորմանը, հարկ ենք համարում նշել, որ՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փոխանցության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փոխանցության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ համապատասխան նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը Նախագիծը փորձաքննության պետք է ուղարկի նախագծի հիմնավորման հետ մեկտեղ: Փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այնինչ, տվյալ պարագայում հարկ ենք համարում նշել, որ Նախագծին կից ներկայացված որևէ հիմնավորում առկա չէ: Ուստի, ելնելով նշվածից առաջարկում ենք ապահովել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված պահանջները» և Նախագծին կից պարտադիր ներկայացնել Նախագծի հիմնավորումը:

Միևնույն ժամանակ, ներկայացված Նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

1/ Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք ներկայացված Նախագիծը համապատասխանեցնել նորմատիվ իրավական ակտերի վավերապայմաններին ներկայացվող պահանջներին:

2/ Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ առաջարկում ենք Նախագծի նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:

3/ Նախագծի նախաբանում «18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով» բառերն առաջարկում ենք փոխարինել «18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով» բառերով, իսկ «33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով» բառերը՝ «33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերով:

4/ Նախագծի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ նշված «Հաստատել» բառն առաջարկում ենք հանել:

5/ Նախագծի 1-ին կետում նշված «փոփոխությունը:» բառը և կետադրական նշանն առաջարկում ենք փոխարինել «փոփոխությունները՝» բառով և կետադրական նշանով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծով կատարվում են ոչ թե մեկ, այլ մի քանի փոփոխություններ:

Բացի այդ, տվյալ պարագայում նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ Նախագծի 2-4-րդ կետերով առաջարկվող փոփոխությունները վերաբերվում են որոշման հավելվածներին՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին կետում նշել, որ փոփոխությունները կատարվում են որոշմամբ հաստատված հավելվածներում (հատվածներում):

6/ Նախագծի 2-4-րդ կետերում նախատեսված կարգավորումներն առաջարկում ենք ամրագրել ենթակետերի տեսքով:

7/ Նախագծի 2-4-րդ կետերում ամրագրված իրավակարգավորումներն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներին:

Միաժամանակ, առաջարկում ենք նաև Նախագծի 2-4-րդ կետերում նախատեսված կարգավորումները ներառել և ձևակերպել հավելվածների տեսքով:

8/ Նախագծի 5-րդ կետում «հրապարակման օրվա հաջորդող» բառերն առաջարկում ենք փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող» բառերով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

8/10/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245